ՐԱՖՖԻ

Բախտ

Ճանճերն այնտեղ են հավաքվում,
ու որ մեղր կա:
ԱՌԱԾ

Կար ժամանակ, որ ես էլ
Էի ուրախ, երջանիկ,
Շողշողում էր իմ բախտի
Աստղը պայծառ, գեղեցիկ,

Ո՞վ չէր իմ սերտ բարեկամ,
Ո՞ւմ չէի ես սիրելի,
Իմ մոլությունքն անգամ
Էին հարգի, գովելի:

Քանգի լի էր իմ քսակ,
Առատ, ճոխ էր և սեղան,
Մինչ հալածող թշնամիքս
Քնքուշ եղբայր ինձ եղան:

Ամեն մարդ իմ պատվին
Դներ բարձր աստիճան,
Որպես մեղրը ճանճերից
Միշտ պատած էր իմ շրջան:

Ամեն բերան ջերմեռանդ
Հորինում է ինձ գովեստ,
Իմ հանճարն ու իմ տաղանդ
Էին գերագույն և համեստ:

Ամեն մի դատարկ խոսքիս
Պատասխանն էր միշտ այո՛,
Ձյունը սև է ասեի,
Սև՛ է, պարոն, սև՛, այո՛:

Ամեն հիմար գրվածքիս
(Թեև գայլի շարական(,
Գովասանքին չափ չկար,
Էր վսեմ, անզուգական:

Որքան ես իմ խոսքերում
Էի սխալ, շաղակրատ,
Բայց ոսկեղեն իմ բերնով
Խոսում էր մեծն Սոկրատ:

Կեղծավորքն այդպիսի
Փաղաքշանաց փոխանորդ՝
Իմ վերջին կոպեկներին
Էին ընկեր բաժանորդ:

Բայց երբ դարձավ անիվը
Չարանախանձ իմ բախտին,
Որպես օդեղեն ամրոց
Բոլորն անցան դառնագին:

Եվ հեռացան ամենքը,
Ջի դատարկ էր իմ քսակ,
Թառամեցա՛վ կեղծավոր
Ձեռքով հյուսված իմ պսակ...

Խավարեցա՛վ, կարծես թե,
Ոսկի ավուրց իմ արև,
Եվ ո՛չ ոք այնուհետև
Չէր ուզում տալ ինձ բարև:

Այդպես է միշտ աշխարհի
Անիծված կարգն ու կանոն,
Երբ բախտը ծռվեց քեզանից,
Ծուռ է գծում միշտ քանոն...

Հրեշտակի լեզվով խոսե,
Ինչ կուզես դու մտածե,
Ո՞վ բանի տեղ կդնե,
Կասեն՝ խելքը ցնդած է:

Այժմ եղբայր, իմացիր,
Քո հաշիվն և քո սակ,
Չունես կյանքի իրավունք,
Երբ դատարկ է քո քսակ: